# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 37/37.2/21340-14
17.12.2014թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան,

Ներկայացվում են «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հայտնում ենք նաև, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 386-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 484-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի փետրվարի 11-ի N 50-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 3660-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության

Կատարող՝ Գայանե Գևորգյան
Գործարար միջավայրի բարելավման ու ՓՄՁ զարգացման վարչություն
597-134

կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014 թվականի հունվարի 22-ի N 18-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների նախագծերի վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ չեն տրամադրվում՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝



ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն***:

Նախագծով սահմանվում է.

- Հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը կարող են հարկային մարմին ներկայացնել միայն գործունեությունը սկսելուց առաջ և հայտարարության մեջ փոփոխությունների իրականացման դեպքում:
- Վերոնշյալ հայտարարությունը, գործունեության դադարեցման և վերսկսման դիմումները և տեղեկությունները հնարավոր կլինի հարկային մարմին ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով:
- Բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտներն այլևս չեն ներկայացնի շահութահարկի հաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է հարկային ոլորտում կատարել գործող կարգավորումների հստակեցում, մասնավորապես՝ բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար կիանվի շահութահարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորությունը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկաների հետ, ուստի Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ